

свое отраженное в "Частоповторяемых речах", является, по сути, нормой зороастрийского права. Эту норму, вместе со многими другими, Григор Просветитель заимствовал из армянской зороастрийской правовой системы и внедрил в армянскую христианскую правовую систему, тем самым обеспечив связь и преемственность двух армянских правовых систем и цивилизаций.

LAMENTATION FOR THE DEAD AS OLD ARMENIAN LAW NORM

S. A. KHACHATRYAN

It is proved in the article that in "Speeches" it is essentially the norm of Zoroastrian Law. Gregory the Illuminator borrowed that and many other norms from the Zoroastrian Law and inserted them into the Christian Law which led to the continuation of civilizations and the hereditary relation of the Armenian Zoroastrian and Christian Law systems.

ԱԶԱՏ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ «ՀԱՅԱԽԱՊԱՏՈՒՄ ճԱՌՔՈՒՄ» (ՎԵՐԼՈՒԹՈՒԹՅՈՒՆ ԻՐԱՎՈՒՄՔԻ ԴԻՐՔԵՐԻՑ)

Ս. Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ
Իրավագիտության բեկմածու, դրցենս,
ԳՊՀ դասախոս

Ազատ ընտրության հարցն այն կարևոր փիլիսոփայական հիմնահարցերից է, որը հանճարեղությամբ քննարկվել և լուծվել է «Հաճախապատում ճառքում»: Ի՞նչ է նշանակում ազատ ընտրություն: Անփոփելով այս ճառքում սփոված բազմաթիվ արժեքային դատողություններն այդ մասին՝ կարելի է եզրակացնել, որ դա նշանակում է սուբյեկտի կողմից ազատ կամքով, առանց արտաքին միջանութության ու հարկադրանքի գործողության տեսակների, դրանց միջոցների ու նպատակների միջև ընտրություն կատարելու հնարավորություն: Ընտրությունն ընկած է մարդու ազատ կամքի գործողության տեսակների, դրա նպատակների որոշման հիմքում և առանց ընտրության չկա և չի կարող լինել ազատ կամքի դրսւորում, դրա հնարավորություն: Ընտրություն կատարել՝ նշանակում է նախքան գործողություն սկսելը կողմնորոշվել երկու և ավելի ցանկությունների, նպատակների, գործողության տեսակների, ինչպես նաև նպատակներին հասնելու միջոցների և ուղիների միջև: Դա նշանակում է նախքան գործողության դիմելը՝ մարդու նորում ծագած երկու կամ մի քանի պատճառներից ու նպատակներից որևէ մեկի ընտրություն և այդ ընթացքում որևէ արտաքին հարկադրանքի բացակայություն: Դա ենթադրում է նաև որևէ նպատակով կամ որևէ գործունեություն կատարելու դիտավորությամբ երկու և ավելի օբյեկտների միջև համեմատություն և դրանցից որևէ մեկի ընտրություն: Այն միշտ նախորդում է ազատ կամքի գործադրմանը, իսկ ազատ կամքով կատարված գործողությունը միաժա-

մանակ նշանակում է նաև արդեն իսկ ընտրված նպատակի ուղղությամբ ջանքերի գործադրում: Այն նաև ընտրության հիման վրա կատարված արարքի, այդ թվում՝ մտքում ձևավորած մտքի, ասված խոսքի, կատարած գործի համար առկա պատասխանատվություն կամ պարզ ընդունելու հնարավորության գիտակցում է: Բայց սրանք բոլորը ազատ ընտրության միայն շարքային, երկրորդային, բոլորի կողմից ընդունված պատկերացումներ են: Դու մասին առկա է նաև գլխավոր, առաջնային պատկերացում, որն էլ ընկած է ամեն մի ընտրության հիմքում: Դա բարու ու չարի միջև ընտրությունն է:

Ազատ կամքի և ընտրության հարցերը սովորաբար դիտարկվել են որպես բարյականության ոլորտի կատեգորիաներ և համարվել են, որ ազատ կամքի և ընտրության մասին տեսության հիմնադիրը Արիստոտելն է (ինչը մոլորություն է): Նրա «Սիկոնաքոսի եթիկա» գրքում դրանց մասին խոսվում է որպես առօրյա գործերում բարյական կողմնորոշման հիմքի¹: Ընտրությունն այնտեղ հանդես է գալիս որպես «ձգտնան հիմք դեպի որևէ բարիք»: Իսկ բարիքը դա այն է, «ինչին բոլորը ձգտում են» որպես նպատակի: Նա տարբերում է նպատակների միջև «գիտակցված ընտրությունը» «կամայականությամբ (ազատ կամքով) ընտրությունից» և առաջինը կատարյալ համարում երկրորդից: Նպատակների մի մասը նրա կողմից դիտվում են որպես «գործունեություն», իսկ մյուս մասը՝ գործունեության արդյունքներ, դրանց մասին պատկերացումներ: Նա գերադասում է երկրորդ տեսակի նպատակները, որոնք բարիքներն են՝ դրանցից բարձրագույնը կամ կատարյալը համարելով երկրային երջանկությունը: Անմահության ձգտելը երկրի վրա նա համարում է անհասանելի նպատակ: Ընտրությունը նպատակների ու միջոցների (գործունեության, դրա տեսակների, հնարքների) միջև է, բայց նախ և առաջ «Մեր որոշումը ոչ թե նպատակներին է վերաբերում, այլ միջոցներին», քանի որ՝ «Ղեկան նպատակ՝ մտածում են, թե ինչպես և ինչ միջոցներով դրան հասնել»: Ընտրությունը չարի ու բարու, մահկան և անմահության միջև, որպես վերջնական, գլխավոր ընտրության տեսակների, նրա մոտ բացակայում է, քանզի հունական կրոնում բացակայել են դժոխքի և երկնային թագավորության մասին պատկերացումները, որոնք առկա են զրադաշտական, ապա՝ քրիստոնեական հավատալիքներում: Նույն մեռյալների թագավորություն գնում են բոլորի հոգիները՝ և՝ առաքինիները կամ բարիները, և՝ չարագործները:

Ազատ կամքի ու ազատ ընտրության հարցերը կենտրոնական տեղ են գրավում քրիստոնեական առաջին փիլիսոփաներ Կ. Ալեքսանդրացու «Ստրոնատներ» և «Պեդագոգ»², Օրիգենեսի «Ընդեմ Յելսի» և «Ակիզբների մասին»³ ու Գրիգոր Լուսավորչի «Հաճախապատում ճառք» աշխատություններում: Նրանք էլ փիլիսոփայական այդ կատեգորիաները ներմուծել են քրիստոնեական աստվածաբանության մեջ և դրանց լույսի ներքո քննարկել աստվածաշնչյան անձերի վարքագիծը: Դրանցից Գր. Լուսավորչի տեսությունը, որն էլ առանձնահա-

¹ՏԵ՛ս Արիստոտել. Նիկомախուանական տեղ են գրավում քրիստոնեական առաջին փիլիսոփաներ Կ. Ալեքսանդրացու «Ստրոնատներ» և «Պեդագոգ».

²ՏԵ՛ս **Климент Александрийский**. Педагог. М., Учебно-информационный экumenический центр ап. Павла, 1996; **Խոյմի**՝ Строматы. Перевод Н. Корсунского // Отцы и учителя церкви 3-его века. Онтология. Т.1, М., «Либрис», М., 1996, Кн. 5, Ч. 3, 102,1:

³ՏԵ՛ս **Ориген**. Против Цельса. Пер. с греч. Л. Писаревса, М., 1996; **Խոյմի**՝ О началах. Самара, «РА», 1993 (на основе издания Казанской духовной академии 1899):

տուկ և ամենակատարյալն է քրիստոնեական գաղափարախոսության մեջ ընդհանրապես, անհայտ է մնացել գրական հասարակությանը, առաջին անգամ քննարկվում է այստեղ, մեր կողմից: Եվ եթե առաջին երկուսը Աստծո և աստվածաշնչյան անձերի ազատ կամքի ու ազատ ընտրության մասին դատողություններ են անում Արիստոտելի, Պլատոնի և ընդհանրապես՝ հունական դասական փիլիսոփայության դիրքերից, այդ կատեգորիաներին տալով սոսկ կրոնաբարոյական նշանակություն, ապա հայ փիլիսոփան դա անում է հայկական գրադաշտական փիլիսոփայության, Սպիտակ Սպիտամա Զորոաստրի (Զրադաշտ) ուսմունքի դիրքերից՝ դրանց տալով նաև իրավական, քաղաքական, տնտեսական և գեղագիտական նշանակություն և իմաստ ևս: Առաջինը լինելու հանգամանքով էլ պայմանավորված են այդ ֆենոմենների մասին Կ. Ալեքսանդրացու և Օրիգենեսի կողմից արտահայտած բազմաթիվ վիճելի ու հակասական մտքերն այդ աշխատություններուն:

Դրանց գլխավոր պատճառը, նախ, Սուրբ Երրորդության, Նրա անձերի ազատ կամքի ու ընտրության մասին Կ. Ալեքսանդրացու ձևակերպած թերի և հակասական պատկերացումն է: Իսկ քրիստոնեական ազատ կամքի մասին տեսության ելակետն ընդհանրապես հենց Աստծու ազատ կամքի գաղափարն է: Կարելի է անգամ պնդել, որ նրա աշխատություններում Սուրբ Երրորդության մասին քիչ թե շատ որոշակի պատկերացում անգամ չկա: Դրանցից «Պեղագոգում» Նա հիշատակվում է մեկ անգամ, բայց ոչ թե որպես Եռամիասնություն, այլ քառամիասնություն: Դրա անդամների մեջ է մտցված նաև «Մայր Կույսը»⁴: «Ստրոմատների» մեջ էլ Նա նորից հիշատակվում է միայն մեկ անգամ, դրա հինգերորդ գրքում, երբ փորձ է արվում Պլատոնին վերագրել մարդարեւություն այն մասին, որ իբրև նա իր նամակներից մեկում գուշակել է ապագայում Սուրբ Երրորդության երևան գալու մասին⁵: «Պեղագոգում» Նա Քրիստոսին համարում է քարոզիչ, ուսուցիչ («Պեղագոգ»), իսկ մարդկության՝ ուսուցման կարոտ մանուկներ, և, անընդհատ Նրան կոչելով Լոգոս, Խոսք՝ նրա մասին արտահայտում է հետևյալ տարօրինակ միտքը, որ Լոգոսը, այն է՝ Քրիստոսը, ժամանակին եղել է ընդհամենը Յայր Աստծո ստեղծած հրեշտակներից մեկը⁶: Այնուհետև, «նախակին հրեշտակ» Քրիստոսը դիտվում է նաև Աստծու ինչ-որ էներգիա՝ բխած Յորից: Երբեմն էլ Նա կոչվում է նաև Աստված, բայց որի լիազորությունները Յորից են, և որոնք Նա իրացնում է Յոր կամքին համապատասխան և այդ կամքի շրջանակներում: Դա էլ նշանակում է, որ փաստորեն Քրիստոսը զուրկ է ազատ կամքից և ինքնուրույն ընտրություն կատարելու հնարավորությունից: Սուրբ Յոգու կամքն էլ նրա մոտ առանձնակի ինքնուրույնության չի տիրապետում և Նա նույնպես զուրկ է ինքնուրույն կերպով ազատ ընտրության հնարավորությունից:

Այս ամենով էլ պայմանավորված է Կ. Ալեքսանդրացու մոտ Որդու և Սուրբ հոգու կամքերը Յայր Աստծու կամքին ենթարկված լինելու, Նրանց ազատ կամքերի գրության և ուժի սահմանափակ, սուրբորդինացված, մեկը մյուսին ենթարկված լինելու հանգամանքը: Նրանց կամքերի միասնության կամ Նրանց միակա-

⁴Տե՛ս **Климент Александрийский**. Педагог, Кн., 1, гл. 6, էջ 15:

⁵Տե՛ս **Климент Александрийский**. Строматы., Кн. 5, Ч. 3, 102,1:

⁶Տե՛ս **Климент Александрийский**. Педагог. Кн., 1, Гл. 6, էջ 15, Гл. 7, էջ 21:

մության մասին խոսք անգամ չկա: Որդին և Սուրբ հոգին զուտ Հայր Աստծու կամքը կատարողներ են և ոչ թե համակատարողներ: Երեմն էլ նրա կողմից Քրիստոսը կոչվում է «մարդաստված», «Ազատ կամայականության մանկավարժ» (I. 6, 31.1), որն աշխարհ է ուղարկվել Յոր կողմից՝ ազատ կամքով մանկավարժություն անելու: Այսպիսով Քրիստոսի ազատ կամքի և ազատ ընտրության հարցը վերջնականորեն խեղաթյուրվում է:

Կիմենտ Ալեքսանդրացու աշխատություններում հրեշտակների ազատ կամքի ու ընտրության հարցերը նույնպես առանձնապես արծածված չեն, ինչպես որ է Գր. Լուսավորչի «Հաճախապատում ճառօրում»: Կ. Ալեքսանդրացին, իհարկե, հիշատակում է և սատանային, և հրեշտակներին, բայց նրանց պայքարի անտագոնիստական բնույթը և նրանց կամքերի փոխհարաբերության դիալեկտիկան, նրանց ազատ կամքի և ազատ ընտրության հարցերը փաստորեն չեն քննարկվում և դրանց նրբությունները չեն բացահայտվում: Իսկ դա այն պատճառով, որ հունական կրոնում և առասպելաբանության մեջ հրեշտակների ու դևերի թեմատիկան ընդհանրապես աղքատ է: Դրա համար էլ ազատ ընտրության սուբյեկտները Կիմենտ Ալեքսանդրացու մոտ հիմնականում մարդիկ են, ինչպես որ դա Արիստոտելի մոտ է: Նրա աշխատությունները լի են մարդկանց կողմից ազատ կամքով ազատ ընտրության, դրա անհրաժեշտության և հնարավորության մասին գիտականորեն կատարյալ դատողություններով ու գնահատականներով: Իսկ մարդկանց կողմից Ազատ ընտրությունը (*liberum arbitrium*) նրա մոտ դա ընտրություն է մեղք գործելու կամ չգործելու միջև, դրա ընդունակություն, որին անընդունակ է դիտվում միայն Աստված:

Ազատ կամքի և ազատ ընտրության հարցերին է նվիրված նաև Օրիգենեսի «Ընդեմ Ցելսի» և «Ակիզբերի մասին» աշխատությունները: Նա Գր. Լուսավորչին նախորդած քրիստոնեության մյուս խոշոր ջատագովը և կրոնական փիլիսոփան է, որի աշխատություններում հետևողական քննարկման են ենթարկվել ազատ կամքի և ազատ ընտրության հարցերը: Նա ազատ ընտրության մասին իմաստավորված հիշատակում է իր «Ընդեմ Ցելսի» աշխատության չորրորդ գրքի LXVII ենթագլխում⁷: «Ակիզբերի մասին» աշխատության մեջ ազատ ընտրության մասին հիշատակություն է արվում դրա երկրորդ մասի 6-րդ գլխի 5-րդ ենթագլխում, երբեմն էլ՝ այդ աշխատության երրորդ բաժնում, որն ամբողջությամբ նվիրված է ազատ կամքի ու ընտրության հիմնահարցին: Այդ աշխատության մեջ Օրիգենեսը պնդում է, որ «Քրիստոսի մեջ եղել է մարդկային բանական հոգի», որը նրա մեջ, «երկար վարժություններից հետո», վերածվել է բարու «բնության» և այլև զրկվել չար ու բարու միջև ընտրություն անելու և մեղք գործելու ընդունակությունից: Նա Քրիստոսին դիտում է ոչ թե Աստված, այլ մարդ (Կ. Ալեքսանդրացին էլ համարում է, որ Նա նախկին հրեշտակ է): Նա Քրիստոսին միշտ էլ համարել է արարած, և նույնիսկ՝ արարված Աղամից հետո: Աստված, որը Սուրբ Երրորդությունն է, մեկ միասնական կամք չունի: Այն առանձին երեք կամքերի սուբրորդինացված համակարգ է, որի մեջ Հայր Աստծու կամքը առաջնային է Քրիստոսի, իսկ Քրիստոսինը՝ Սուրբ Յոգու կամքի նկատմամբ: Ընտրությունն էլ Նրանց կողմից կատարվում է Հայր Աստծու պատվերով: Մնացած բոլոր «բանական» արարածները ազատ կամքով ընտրելու հատկություն ունեն, բայց դա ոչ թե

⁷Տե՛ս *Օրիգեն*. Պրотив Цельса. Пер. с греч. Л. Писаревса, М., 1996, էջ 184.

նրանց «բնությունից» է, այլ Աստծու տված հնարավորություն և ընդունակություն: Նույն գրքի երկրորդ մասի «Հրեշտակների մասին» 8-րդ գլուխ 3-րդ ենթագլխում նա գտնում է, որ բոլոր բանական արարածները, այդ թվում՝ նույնիսկ սատանան ու նրա հետևորդ չար ոգիները պահպանում են ինչպես դեպի բարին, այնպես էլ դեպի չարը հակվելու և ընտրություն կատարելու հնարավորությունը: Չարից լրիվ ձերբազատված է դիտվում միայն «Աստծու եկությունը»⁸: Ավելացնենք նաև, որ այս ջատագովների մոտ ազատ կամքն ու ազատ ընտրությունը համարվում են միայն բարոյական կատեգորիաներ:

Իսկ ազատ կամքի ու ընտրության հիմնահարցերը շատ ավելի հին են և շատ ավելի ընդգրկուն, քան Արիստոտելի և այս փիլիսոփա-կրոնագետների մոտ է: Դրանք կազմում են զրադաշտական իրավական, կրոնական, բարոյական, քաղաքական, տնտեսական և էքթետիկական (գեղագիտական) գաղափարական-կարգավորիչ նորմատիվ սիստեմների (համակարգերի) հիմքը, առաջարվել են Զորոաստրի կողմից մ.թ.ա. 7-րդ դարի վերջին: Դրանք արծարծվել են Ավեստայում և ավեստական գրականության մեջ, որից էլ անցել Գր. Լուսավորչի «Հաճախապատում ճառքին» և իրենց անախաղեա օարգացումն ստացել այնտեղ:

Արիեստականորեն տարվելով հինգերորդ դարի սկիզբ և վերագրվելով Մ. Մաշտոցին, դրանով իսկ այդ տրակտատը մասամբ արժեգրկվել է: Դրա շատ գաղափարներ, որոնք ընդորինակվել, յուրացվել ու արծարծվել են նրանից հետո հանդես եկած կապադովկիական հայրերի՝ Բարսեղ Սեծի, Գ. Նիսացու և Գ. Նազարանի կողմից, վերագրվել ու վերագրվում են վերջիններիս: Նման թյուր կարծիքն օրինականացվել է «Հաճախապատում ճառքը» ժամանակի մեջ հինգերորդ դար տեղափոխելու և Մ. Մաշտոցին վերագրելու պատճառով: Դրա հետևանքով այն մասամբ կորցրել է իր գիտական և քաղաքակրթական նշանակությունը, համարվել կապադովկիացիների աշխատությունների արտացոլում և հետևանք, երբ ճիշտ հակառակն է: Դրանով հայ կուլտուրան (մշակույթը) ահօնի վճար է կրել, աղճատվել և աղքատացվել է, կորցրել իր առաջնային դերը տարածաշրջանում և աշխարհում:

Դիմ Կտակարանում ազատ կամքի և ընտրության մասին բոլոր հիշատակումներն ունեն այլաբանական բնույթ, և դրանց մասին պատկերացում կազմել առանց այլաբանական մեթոդի անհնար է: Մարդու կողմից բարու ու չարի միջև դրախտում ազատականորեն կատարած ընտրության մասին հնարավոր է խոսել միայն այլաբանական մեթոդի հիման վրա, որովհետև ազատ կամքի մասին այնտեղ ուղղակի խոսք չկա և այն միայն ենթադրվում է: Բացի դրանից, սատանան նրան դրդում, հակում էր դա անել: «Ծննդոցի» 6:2 տաճը Աստծու որդիները մարդկանց դուստրերից կին են «ընտրում»: Արդյո՞ք դա ազատ ընտրություն էր: Նույն գրքի 13:11 տաճը «Ղովտն ընտրեց Շորդանանի ողջ շրջանը...»: Նույն գրքի 12:1-4 տներում Տերը Աբրահամին կոչում է գնալ այն երկիրը, որը ցույց կտա: Ենթադրվում է, որ Աբրահամը կարող էր ընտրություն կատարել գնալու և չգնալու միջև: Նույնի 22:1-18 տներում Տերը պահանջում է Աբրահամից զոհաբերել իր որդի հսահակին: Ենթադրվում է, որ նա դրանում ազատ ընտրության հնարավորություն և իրավունք ուներ: «Դատավորների» 5:8, 10:14, «Ա ԹագաՎորություն-

⁸Տե՛ս՝ *Օրիգեն*. Օ началах. Самара, «РА», 1993 (на основе издания Казанской духовной академии 1899), էջ 31, 53.

Աերի» 8:18, 12:13, 118 սաղմոսի 30 տներում նույնպիսի անորոշ վիճակ է: Դրանցում ազատ ընտրության մասին խոսք չկա, այլ միայն ընտրության: Դին Կտակարանի միայն «Ծննդոցի» 6:2 տաճը և Եսայու 7:15-16 տներում է խոսքը գնում չարի ու բարու միջև ընտրության մասին, բայց ազատ կամքի կամ ազատ ընտրության մասին դրանցում էլ խոսք չկա: Դրանք միայն Ենթադրվում են: «Սիրաքի» գիրքն էլ, որտեղ խոսք է գնում ազատ կամայականությամբ ազատ ընտրության մասին, ինչպես հայտնի է, Աստվածաշնչի կազմում նախատեսված չէ: Այն երկրորդականոն գիրք է և ընդգրկված է միայն Աստվածաշնչի որոշ հրատարակություններում (1794, 1805, 1860, 1994, 1997), թեև դրա բազմաթիվ թարգմանություններն առկա են Աստվածաշնչի տարբեր դարերից մնացած ժողովածուներում:

Նոր Կտակարանում ընտրության մասին, հիմնականում՝ Աստծու և մարդկանց կողմից կատարվող, խոսվում է Մատքեռուի Ավետարամի 20:16, Սարկոսի Ավետարամի 13:20, Ղուկասի Ավետարամի 6:13, Յովհաննեսի Ավետարամի 6:70, 13:18, 15:16, 19, 10:42, 14:7 տներում, «Գործի» 6:5, 1:2, 24, 9:15, 13:17, 15:22, 25, «Յոննեացիներին» թղթի 9:11, «Ա Կորնթացիներին» 1:27-28, «Բ Կորնթացիներին» 8:19, «Հակոբոսի» 2:5, «Ա Պետրոսի» 2:9 տներում և այլն: Բայց ազատ կամքի կամ ազատ ընտրության մասին դրանցում կրկին ուղղակի ոչ մի խոսք չկա, և այն դարձյալ միայն Ենթադրվում է: Ընդ որում, նշված տներում նիշտ չէ, որ խոսքը ազատ ընտրության մասին է: Այդ բոլորը վկայում են այն մասին, որ խսկապես ազատ կամքի և ընտրության ուսմունքը չի ծագել Աստվածաշնչի հիման վրա, և չէր կարող ծագել՝ այնտեղ դրա բավարար հիմքերի բացակայության պատճառով: Բայց այդպիսի ուսմունքը քրիստոնեությանը պետք էր և այն նրան վերագրել է՝ հրաշալի պտուղներ տալով: Առանց դրա, առանց Երկնային Թագավորության ու դժոխքի միջև ընտրության գաղափարի, հնարավոր չէր հետևողական քարոզություն կատարել և քրիստոնեական համայնքները անդամներով համալրել: Դա էլ հնարավոր էր անել միայն Աստվածաշնչի պատկերները այլարանական և սիմվոլիկ մեթոդների հիման վրա մեկնաբանելու միջոցով, ինչն էլ արել են Կ. Ալեքսանդրացին, Օրիգենեսը, Գր. Լուսավորիչը: Առանց այդ նեթողների հնարավոր չէր Աստվածաշնչյան հավատալիքներն ու գաղափարները դարձնել փիլիսոփայության առարկա, և եթե Կ. Ալեքսանդրացին, Օրիգենեսը դա արել են հունական դասական փիլիսոփայության դիրքերից, ապա Գր. Լուսավորիչը (և Ազարանգերոսը՝ գրադաշտական կամ հայկական-ազգային փիլիսոփայության հիման վրա: Իսկ դրանց մասին կատարյալ տեսության հիմնադիրը Գր. Լուսավորիչն է, որն էլ շարունակել են զարգացնել կապադովկիական հայրերը, Օգոստինոս (Ավգուստինոս) Երանելին, Պելագիոսը, Ե. Կողբացին⁹ և այլք:

⁹ Տե՛ս Պамятники византийской культуры. М., 1968; **Василий Великий.** В двух томах, СПб, типография Сойкина, 1911; **Блаженный Августин.** О свободе воли. Пер. М. Ермаковой, А. Шарниной. // Антология средневековой мысли, В двух томах, т. 1., СПб, 2001; **Սույնի՝** О Граде Божием. Минск – Москва, «Харвест», 2000; **Սույնի՝** О Граде Божием. Минск – Москва, «Харвест», 2000; **Эразм Роттердамский.** Философские произведения. М., 1987; **Пелагий.** Послание к Деметриаде. // **Эразм Роттердамский.** Философские произведения. М., 1987, էջ 594-636; **Мартин Лютер.** О рабстве воли. // Эразм Роттердамский. Философские произведения. М., 1987, էջ 290-545; **Խաչատրյան Ս. Ա.** Եզնիկ Կողբացին կամքի ազատության մասին, Երևան, 2003:

«Հաճախապատում ճառքում» առարկայացած ազատ կամքի և ազատ ընտրության մասին տեսությունը հիմնված է ավեստական նույնանուն ուսմունքի վրա, և կապ չունի վերոնշված քրիստոնյա ջատագովների քերթվածքների հետ: Ավեստան լի է բարու և չարի, երկնային թագավորության ու դժոխքի միջև ընտրություն կատարելու անհրաժեշտության մասին դատողություններով: «Դուալիզմի դրկտրինա» գարայի 2 տաճը ասված է. «Այսպիսով, ուշ դարձրու, ով նարդ, և լարիր քո լսելիքը՝ ին խոսքի գերագույն ինաստին հասու լինելու համար: Նա քեզ կրելադրի, թե ինչն ընտրելուն է լավ՝ ամեն մեկին ցույց կտա նա: Ընտրությունը վերաբերում է քո մարմնին և քեզ: Եվ մինչև որ վրա չի հասել մեծ ժամանակը, մեզ սովորեցնելու են նրանք, ովքեր տիրապետում են ինաստության»: Իսկ ինաստության տիրապետում են չարի ու բարու նախասկիզբների հիմնադիրները՝ Արամազդն ու Ահրիմանը, որոնցից մեկը սովորեցնում է ընտրել բարին, իսկ մյուսը՝ չարը: Նույն գարայի երրորդ տաճն էլ ասված է, որ «Երկու ոգիները (Արամազդն ու Ահրիմանը)՝ երկվորյակները, ամենասկզբից իրենք իրենցից հօչակեցին մաքուր և աննաքուր նտքեր, խոսքեր ու գործեր: Բարեմիտ ինաստունները միայն գիտեն երկու հօչակողների միջև տարբերությունները և զգիտեն դրա մասին չար ինաստունները: Բարեմիտների դատը անսխալ է և ճիշտ, ինչպես մեկ, այնպես էլ մյուս ոգու մասին»:

Նույն գարայի 5-6 տներում էլ ասված է. «Այդ ոգիներից չարը ընտրեց անմաքուր գործը, իսկ մաքուրն ընտրեց ոգին անարատ՝ բնակվող անշարժ (չերեացող, չտատանվող – Ս. Խ.) երկնքում: Մաքրությանն հետևեցին ծշտության գործերով Ահուրին մաքրության մեջ պաշտողները, հավատալով նրան՝ Մազդին: Ընտրությունը մեջ ծշտությունը չընտրեցին դևերի կաճառները և նրանք, ովքեր նրանց կողմից խաբված են: Միայն անմաքուր ոգին որոշեց իր ընտրությունը: Նա գնաց երկնտության և անմիջապես Այշմի (Յեշմ) շուրջ հավաքվեցին նրանք, որոնք այս աշխարհին ցանկանում են այլանդակություններ»: Ազատականորեն այդ սկիզբների միջև ընտրություն կատարելու անհրաժեշտության մասին հիշատակումներ կան նաև Ավեստայի «Դուալիզմ» գլխում, որը տարբեր գարաներից չարի ու բարու, դրանց միջև ընտրություն կատարելու մասին ծաղկաբաղ է: Ընտրության գաղափարի բովանդակության բացահայտման համար առանձնահատուկ նշանակություն ունեն «Հավատո հանգանակ» գարայի 2 և 4 տները: Զրադաշտական դառնանակություն ունեն «Հավատո հանգանակ» գարայի 2 և 4 տները: Զրադաշտական դառնանակություն ունեն «Հավատո հանգանակ» գարայի 2 և 4 տները: Զրադաշտական դառնանակություն ունեն «Հավատո հանգանակ» գարայի 2 և 4 տները: Զրադաշտական դառնանակություն ունեն «Հավատո հանգանակ» գարայի 2 և 4 տները: Զրադաշտական դառնանակություն ունեն «Հավատո հանգանակ» գարայի 2 և 4 տները: Զրադաշտական դառնանակություն ունեն «Հավատո հանգանակ» գարայի 2 և 4 տները: Զրադաշտական դառնանակություն ունեն «Հավատո հանգանակ» գարայի 2 և 4 տները: Զրադաշտական դառնանակություն ունեն «Հավատո հանգանակ» գարայի 2 և 4 տները:

Ազատ ընտրության մասին «Հաճախապատում ճառքում» կատարված դի-

¹⁰ Տե՛ս Ավետա ը ռուսских переводах (1861-1996). Составление, обицая редакция, примечания и справочники раздел И. В. Рака. Журнал «Нева», «Летний сад», Санкт-Петербург, 1998, с. 130-131, 143-145, 156-157.

տարկումները, ինչպես ասվեց, հիմնված են Ավեստայի վրա, բայց դա ըստ իր խորքային բովանդակության, ինաստի ու նշանակության բոլորվին նոր ուսումնունք է: Դրանում ազատ կամքի և ընտրության հարցերը Գր. Լուսավորչի կողմից բազմակողմանի հատուկ գիտական մշակման ու քննարկման են ենթարկվել, բարձրացվել զարգացման նոր աստիճանի: Ընտրության մասին պատկերացումը նրա մոտ խիստ բազմանշանակ է և շերտավորված: Նա տարբերակում է ընտրության վեց տեսակներ կամ մակարդակներ: Դրանցից ընտրության առաջին և բարձրագույն տեսակը իրականացնում է բացարձակ ազատ կամքով օժտված Աստված՝ Սուրբ Երրորդությունը: Դրա համար, իհարկե, նախ և առաջ անհրաժեշտ է սահմանել Աստծո անձը, որի մասին պատկերացումները, ինչպես նկատեցինք, մինչև Գր. Լուսավորչից եղել են խիստ հեղիեղուկ, տարաբնույթ: Դրա համար էլ իր ճառերում Գր. Լուսավորչը նախ և առաջ անդրադառնում է Աստծո՝ որպես Սուրբ Երրորդության, անձին, Նրա դեմքերին կամ անձերին (իհպոստասներին): Առանց այդ պրոբլեմի լուծման փաստորեն հնարավոր չէ դատել Աստծու ազատ կամքի, ու Նրա կողմից կատարվող ընտրության հարցերին: Աստծու անձի ձևակերպմանն են նվիրված առաջին երկու ճառերը, սակայն դրանց մասին արժեքային դատողությունները սփյուռք են բոլոր ճառերում:

Պատմության մեջ առաջին անգամ Աստծու անձը նրա կողմից բնորոշվում է որպես մեկ միասնական Սուրբ Երրորդություն, Որն ունի մեկ միասնական ազատ կամք և Որի կողմից կատարված ընտրությունը մեկն է: Աստված միակամ և միախորհուրդ Սուրբ Երրորդություն է, և Նրա անեն մի արարում, միտք, խոսք կամ գործ՝ այդ երեք դեմքերի միասնական կամքի դրսնորում է: Սուրբ Երրորդությունը կազմող անձանց կամքերն իրար ենթակա չեն, սուրբորինացված չեն: Նրանք իրար հավասար են և նրանց կատարած ընտրությունն է Նրա բոլոր դեմքերի միակամ ընտրությունն է: Նրանք մի աստվածություն են և մի գորություն: Եվ այդ պատկերացումը Գր. Լուսավորչի կողմից առաջարկվել է Նիկեայի 325թ. տիեզերական ժողովից տասնամյակներ առաջ, իսկ այդ ժողովում Աթանասը և այլք միայն կրկնել են նրա առաջադրած այդ տեսակետը: Սուրբ Երրորդությունն է իր միասնական մեկ կամքով ու գիտությամբ արարել աշխարհը, հրեշտակներին ու մարդկանց՝ այլ արարածներից գերադասելով և ընտրելով հենց նրանց, շնորհել բանականություն և կամք, սահմանել նրանց գործունեությունը կարգավորող օրենքներ: Ազատ կամքն ու ընտրության հնարավորությունը բնատուր չէ, այլ աստվածատուր: «Բ» ճառի 121 տաճն էլ խոսվում է Աստծու, որպես Սուրբ Երրորդության, կողմից կատարած հատուկ կարգի մի ընտրության մասին ևս: Այնտեղ ասված է. «Աստվածեւ այսու ամենայնիվ ընտրեաց ի մարդկանէ իր ժողովուրդ նախանձաւոր լինել ի գործս բարութեան»: Ըստ Ազարանգեղոսի պատմության մեջ շարադրված Ս. Գրիգորի ուսմունքի էլ Աստված հետո հրաժարվել է այդ «կամակոր» չար, վերադաստիհարակման չենթարկվող ժողովրդից, և որպես իր ժողովուրդ ընտրել հայ ժողովրդին՝ նրա երկիրը վերածելով արարչագործության նոր վայրի, իսկ նրան՝ ժառանգորդ, ինչպես որ է «Զ» ճառի 151-154 տներում¹¹:

Յաջորդ՝ երկրորդ տեսակը կամ մակարդակը դա հրեշտակների և մարդկանց

¹¹ Տե՛ս Յաճախսապատում ճառք, էջ 66: **Ազարանգեղոս**, Յայոց պատմություն, Երևան, ԵՊՀ հրատ., 1983, էջ, 20 (21), 48 (49), 52 (53), 136 (137), 190 (191), 206 (207), 254 (255), 312 (313), 434 (435), 482 (483), 472 (473), 488 (489) և այլն:

կողմից ազատ կամքով ազատ ընտրություն կատարելու տեսակը կամ մակարդակն է: Նման ընտրություն կատարվել է մինչև չարության ու չար հրեշտակի անկելն ու երևան գալը: Առաջին անգամ այդպիսի ընտրության տեսակ կամ ծև հիշտակվում է «Բ» ճարի 6-12 տան մեջ: Դա ազատ ընտրություն է ոչ թե բարու և չարի, բարու ու չարի վրա հիմնված նորմերի միջև, այլ Տիրոջ կողմից օրենսդրած օրենքների միջև: Քանի որ չարը դեռևս գոյություն չունի և առաջն ինքնարերաբար չի առաջացել, ուստի և խոսք չի կարող լինել չարի ու բարու միջև ընտրություն կատարելու մասին: «Հաճախապատում ճառքի» վեճետիկյան օրինակի նշված տներում ասված է, որ Աստված՝ հրեշտակներին և մարդկանց ստեղծելուց հետո, ոչ թե նրանցից ինչ-որ բան է վերցնում, այլև թողնում է, որ նրանք «...սուրբ հանգամանքներով բարերարության պէտքերը սահմանած օրենքների միջոցով օրենքների ընտրութիւն կատարեն: Եւ չստեղծեց անպատրաստ և ոչ յարգի արարածներին, այլ տուց ինքնիշխան, ազատ կամք և ընտրող միտք՝ սիրել և հաճել հոգեւոր գորութիւնների ծիզն ու մարդու որդիներին, որպեսզի այն իշխանական կամքով, իրենց այն սիրով ու իրենց այն ընտրող մտքով սիրեն եւ հոգ տանեն, գովեն այն բարերար կամքը, որ նրանց առաջ բերեց, այն ոչնչից դեպի ինչը և զգոյութիւնից դեպի գոյութիւն, ոչ յարգի վիճակից դեպի պատիւ, չնչին վիճակից մտաւոր եւ բանաւոր պատիւ»¹²: Մասնավորապես մարդը, իր ստեղծվելուց հետո, դրախտում ապրում է բացառապես Աստծո կամքի արդյունք հանդիսացող նորմերով: Չարը դեռևս չկա, չկան նրա նորմերը, և նա ընտրություն է կատարում Աստծո տված թույլատրող, լիազորող, խրախուսող և պատվիրանող նորմերի միջև, դրանց հիման վրա ընտրում վարքագիծ տարբերակ: Արգելող նորմեր էլ այնտեղ գրեթե չեն գործում: Դրանք ընդամենը երկուսն են՝ չուտել երկու հանրահայտ ծառերի պտույները, և մարդը չի էլ պատրաստվում դա անել: Պատվիրանող նորմեր են Աստծուն փառաբանելը, Նրան երախտագետ լինելը, որը մարդմ հաճույքով անում է:

Ազատ կամքով ընտրության երրորդ տեսակը առաջացել է այն ժամանակ, երբ հրեշտակներից մեկը՝ մարդու նկատմամբ տածած նախանձի, ատելության հետևանքով, ինքնարերաբար անկել և չարացել է: Նա առաջադրել է չարության նորմեր, գաղափարներ, տարածել դրանք, ներդրել մարդկանց հոգում, հարաբերությունների մեջ: Այդպես աշխարհ են եկել չարը և վարքագիծ չարության նորմերը: Սկսվել է պայքար բարու և չարի, բարության ու չարության նորմերի, գաղափարների, դրանց հետևորդների միջև: Անհրաժեշտություն է առաջացել ընտրություն կատարել բարու ու չարի միջև: Դեշտակների որոշ մասն ու մարդիկ՝ համոզվելով չար սատանայի կողմից և ընկնելով նրա ազդեցության տակ, ազատ կամքով որպես վարքագիծ հիմք են ընտրել չարության նորմերը: Մարդկանց մի մասն էլ սկսել է իր ընտրության մեջ երկնտել, տատանվել բարու ու չարի օրենքների (նորմերի) միջև՝ կատարելով և բարի, և չար արարքներ: Միայն նրանց մի փոքր մասն է մնացել Աստծու օրենքներին՝ արարքի հիմք ընտրելով դրանք, ընտրություն կատարել դրա նորմերի միջև և դրանցից որևէ մեկի հիման վրա ընտրել վարքագիծ որևէ տարբերակ:

Նույնիսկ բարու նկատմամբ չարի գերակայության և դրանց անզիջում պայ-

¹² Տե՛ս **Գրիգոր Լուսավորիչ**, Յաճախապատում ճառք, Թարգմ., առաջարանը, ծանոթագրությունները Վ. Համբարձումյանի, Թեհրան, 2003, էջ 19-20:

քարի այդ փուլում Աստված մարդու կամքը թողել է հնքնիշխան և չի սահմանափակել դրա կողմից ընտրություն կատարելու և դեպի չարի կողմ շեղվելու հնարավորությունը: Նման բռնություն կիրառել՝ կնշանակեր մարդու տեսակի վերացում: «Բ» ճառի 149 տանն ասված է.«...այլ թե ասից ոք, որպես ներեաց Աստուած սատանայի այնքան տարածել զմոլորութեանն զանարենութիւնն՝ իմացիր. զի իշխանակամ կամս է հրեշտակաց եւ մարդկան որ յԱստուծոյ պատուեալ. զի որ ընտիրքն իցեն՝ երեւեսցին ի նոսա եւ ըստ արժանեացն ընկալցին զիատուցումն ի դեպ ժամանակի զիառս եւ զտանջանս յարարչն ամենայն արարածոց»: Իսկ «ԺԸ» ճառի 13 տանը այդ մասին նորից կատարված հարցմանը միաժամանակ տրված է նաև դրա պատասխանը. «Եթէ այդպէս է, զիա՞ոդ չարն, ասեն, յառաջագայի, եւ ոչ բարին միշտ յառաջագայի: Եթէ այդպէս էր, բառնայր պատիւ անձնիշխան կամացն, եւ կորնչէր ընդրութիւնք արդարացն, եւ զրկեալ լինէին քաջըն յաղագս համդիսի պսկակացն»:

Զարի ու բարու միջն ընտրության մեջ չսխալվելու համար Աստված մարդկանց է տվել իր Սուլը, Աստվածաշունչ գիրքը, որը պարունակում է նրա բարերար կամքի արդյունք հանդիսացող ծշմարտությունը՝ իր հոգևոր օրենքները: «Բ» ճառի 50-58 տներում Գր. Լուսավորիչը մարդկանց հիշեցնում է, որ Աստված՝ «...ետ անձնիշխան արարածոց երկուս դաստիարակս որպէս որդույ, զսպառնալիս եւ զաւետիս. երկնչել ի սպառնալեացն եւ փախչել ի վնասակարացն, եւ ցանկալ աւետաւոր բարեացն եւ երթալ զիետ արդարութեան: Ի ձեռն ծշմարիտ Սուլը Գրոց խրատուց իրաւանց եւ իշխանութեանն հնազանդել յաղագս բարեձեւութեանն... եւ ծանիցեն եւ գիտասցեն եւ ընդանեսցին հաճոյից Արարողին ուղղափառ հաւատով, անքակ մնալ ի սիրոյ Արարչին ի ներութեան եւ յանդորրու. եւ արդարացեալք երախտաւորք կամաւք Բարերարին»: Նույն ճառի 119-121 տներում, «Գ» ճառի 31 տանը նորից կոչեր են արվում ընտրությունը կատարել միայն «Աստծու օրենքների, հավատի ու հույսի հիման վրա» և մերժել չարը և հրեշտակներին ու մարդկանց առաջարկվում է ազատ կամքով «ընտրութեամբ հոգեւոր աւրինացն փոփոխումն առցեն»: Ինչպես տեսնում ենք, Աստված, ըստ Գր. Լուսավորիչ, ոչ մի պայմանով մարդուն չի զրկում ազատ կամքով լավի ու վատի, չարի ու բարու, օգտակարի ու անօգտակարի, գեղեցիկի ու տգեղի, արժանավորության և անարժանության, օրինականի և անօրինականի միջև ընտրություն կատարելու և ազատ կամքով արարքներ կատարելու հնարավորությունից:

Եթէ Արամի գործած մեղքի պատճառով չարի սկիզբը գերակայություն է ձեռք բերել աշխարհում (նման կարծիք տիրապետող է եղել երկար դարեր շարունակ): Այդպիսին է Ս. Լյութերի¹³, ինչպես նաև հանճարեղ Ի. Կանտի¹⁴ կարծիքը), ապա Աստված (Ս. Երրորդությունը), հանճինս նոր Կտակարանի, նոր շնորհ (հնարավորությունը) է տվել մարդկանց՝ արմատապես փոփոխություն մտցնելով ընտրության հիմքերի և աշխարհի իրադրության մեջ: Նա չարի դեմ պայքարելու համար աշխարհ է գործուղել Որդի Աստծուն՝ Քրիստոսին, որպեսզի նա փրկչությունը իրագործի: Դրա իրականացնան եղանակներից մեկը Աստծու նոր խոսքի, նոր

¹³ Տե՛ս *Мартин Лютер*. О равестве воли. // Эразм Роттердамский. Философские произведения. М., 1987, с. 290-545.

¹⁴ Տե՛ս *Мартин Лютер*. О равестве воли. // Эразм Роттердамский. Философские произведения. М., 1987, с. 290-545.

Կտակարանի, Ավետիսի, Ավետարանի, բարի լուրի փոխանցումն է մարդկանց, որն էլ չարության դեմ պայքարելու ամենաարդյունավետ գենքն է, բարությունը չարության նկատմամբ գերակա դարձնելու ներգործուն միջոցը: Դրանով էլ, փաստորեն, ըստ Գր. Լուսավորչի, հիմք է դրվել ընտրության չորրորդ տեսակին ու պատմական ժամանակաշրջանին, երբ բարին, որը մինչ այդ չարությանը պարտվող սկիզբ էր, դառնում է ոչ միայն չարին հավասարագոր ընտրության հիմք, ինչպես որ է զրադաշտական ուսմունքում, այլ նաև նրա նկատմամբ ձեռք է բերում գերակայություն: Սա Գր. Լուսավորչի կողմից զրադաշտական այս ուսմունքը կատարելագործելու ամենակարևոր դրսնորումներից է:

Ավետարանի բերած կարևոր բարի լուրերից մեկը Երկնային Թագավորության լուրն է, որի մասին խորհրդածությունները սկսվում են արդեն «Բ» ճառի առաջին տներում: Մյուս լուրը, որը նույնպես խիստ կարևոր և հսկայական դաստիարակչական նշանակություն ունեցող է, դա դժոխքի գոյության որոշակացումն ու փաստումն է: Մարդն ինքը՝ հաշվի առնելով Նոր Կտակարանի նորմերն ու հավատալիքները, կամավոր կերպով պետք է ընտրություն կատարի և որոշ՝ ընկնել «հոգևոր օրենքների անհնազանդության մեջ, բարուց ընկնել չարիքի (դժոխքի) խորքն ու կործանվել՝ ձեռք բերելով անառակի, անօրինական անբարշտի, չարի ու պիղծի անարգական անուն», թե մնալ այդ օրենքների հնագանդության մեջ և դրա համար ստանալ պարզ՝ պատիկ և փառք երկրի վրա, և անմահություն՝ Երկնային Թագավորությունում՝ ազատության, հանգստության «նավահանգստում»: Այդ ընտրությունը բերելու է նաև Երկնային Թագավորության նախադրան կառուցմանը երկրի վրա և չարի լրիվ վերացմանն այնտեղ:

Այսպիսով, Յին Կտակարանի (ինչպես նաև իին հունական և հռոմեական) իրողություններից Նոր Կտակարանում շրջադարձ է կատարվում դեպի զրադաշտական հավատալիքները Երկնային Թագավորության, դժոխքի և հոգու անմահության մասին: Բարի օրենքներին ենթարկվողը զնալու է Երկնային Թագավորություն, իսկ չարին հետևողը՝ դժոխքը: Եվ եթե լիակատար ազատության ժամանակը, ըստ զրադաշտական հավատալիքների, անխուսափելիորեն վրա է հասնելու մեխանիկորեն, 9000 տարի հետո, բարու աստված Արանագի կողմից չար աստված և դւերի իշխան Ակրիմանին սպանելուց հետո (իսկ մինչ այդ հավասարագոր ուժեր հանդիսացող բարին ու չարը իրար դեմ պայքարելու են փոփոխական հաջողությամբ և այդ պայքարից մարդկային պատմության մեջ ոչինչ առանձնապես չի փոխվելու), ապա «Ղաճախապատում ճառքում» այդ հարցը բոլորովին այլ կերպ է դրված: Այնտեղ հերքվում է աշխարհի՝ դեպի բարին փոփոխվելու որևէ կոնկրետ ժամանակի գոյությունը և մեխանիկորեն դրա վրա հասնելու հնարավորությունը (Գ:13): Այդ ժամանակի մոտեցումը, դրա վրա հասնելը կախված է Աստծուց, բայց այդ հարցում կարևոր է նաև մարդու ազատ կամքը: Այս կախված է նաև մարդու ընտրության ելքից, բարու ուղղությամբ նրա գործադրած ճիգերից: Դրա համար պետք է անդուլ կերպով չարի դեմ պայքարել, որն էլ հնարավոր է Սուլը Գրի սահմանած նորմերի հիման վրա ու դրանց միջև ընտրություն կատարելու և չարի նորմերից աստիճանաբար հրաժարվելու միջոցով: Այս կապակցությամբ Գր. Լուսավորիչն առաջ է քաշում Քրիստոսի «հոգևոր օրենքների» հիման վրա մարդու իիվանդ կամքը բուժելու, առողջացնելու, այն չարից, տատանվողից կայունի, առողջի, անսասան բարի, ակտիվ կամքի վերածելու դրույ-

թը: Նա այնտեղ առաջադրում է նաև մարդու կամքը իր նախաստեղծ վիճակին վերադարձնելու, հարթմնիության (արթուն, ակտիվ, սթափ լինելու)¹⁵, կյանքի ոլիքի արագացման միջոցով հոգուտ բարու իրադրության կտրուկ փոփոխության հասնելու անհրաժեշտության հարցերը: Ընդ որում, նա ոչ միայն առաջ է քաշել այդ գաղափարները (Բ:144, Թ: 21, Ե: 39, Ե:55, Ե: 84, Զ:85, 87, Թ: 53, Ժ:89, ԺԱ: 28, 57, 75, 105, 138, ԺԵ: 8, ԺԸ: 22, 53, ԺԹ: 34 և այլն), այլ նաև ակտիվութեն լծվել դրանց իրականացմանը, որի արդյունք է հայոց եկեղեցին և հայոց քրիստոնեական պետությունը:

Քրիստոսի աշխարհ գալուց հետո բարին չարի համեմատությամբ խիստ ակտիվացել, աճել և հզորացել է, չարի նկատմամբ ստացել գերակայություն: Քրիստոսը եկել է աշխարհ, բերել և «ճշմարիտ քարոզությամբ», որպես «քժիշկ հիվանդաց» (Ղ:85), մարդկանց է տվել Նոր Կտակարանը, բերել նոր շնորհ, նոր հոգևոր օրենքներ՝ «դարմանք հոգեւորք... խրատք առողջութեան» (Ղ:85), «ավետիք թողության և հանդերձայլ երանության հույս» (Ղ:86): Կոչ անելով հետևել դրանց և այդպիսով դարնալ Աստծո ժառանգորդ: Դրա միջոցով էլ հնարավոր է կատարել ընտրություն «լաւութեան առաքինութեան գործոցն սրբութեան» (Ղ:88): Նույն «Դ» ճառի 79–80 տներում էլ պայման է դրվում, որ յուրաքանչյուր ոք, եթե «Ճիւանդքն են եւ ստոյգ ապաշխարեսցեն, եւ նոքա փրկութեան հասանիցեն որ ի Քրիստոս Յիսուս: Զի ոչ է պարտ հիւանդացն ի դարմանս արդարոց վայելել, եւ վատացն առ քաջան, եւ մեղաւորացն ընդ անմեղսն, եւ անսրբոցն ընդ սուրբ հաւասարել»: Սա մի ապացույց է այն մասին, որ այս ճառերը գրվել են այն ժամանակ, երբ հայերը դեռևս գրադաշտական էին և առայժմ՝ «հիվանդ»:

Գր. Լուսավորիչը գտնում է, որ Աստվածաշնչի և հատկապես՝ Նոր Կտակարանի նորմերի հիման վրա հնարավոր է վերադաստիարակվել, միանշանակորեն մերժել սատանայի հավատալիքներն ու նորմերը: Դրանց տակ նա հասկանում է հեթանոսական-գրադաշտական նորմերն ու հավատալիքները, հատկապես՝ դրանցով օրինականացված խեթուկդասը, բազմակնությունը և սեռերի հարաբերությունների հետ կապված որոշ այլ նորմեր: Դրանցից հրաժարվելը վճռական ընտրության ամենակարևոր մասն է: Յենց նման կարգի ընտրության անհրաժեշտության մասին է խոսքը «Բ» ճառի 72 և 73 տներում: Այնտեղ հիմնավորվում է, որ մարդու անձնիշխան կամքը ի սկզբանե Աստծուց տված գորություն է, որը մարդը պետք է կանավոր օգտագործի իրեն աստվածային օրենքներին ենթարկելու, Աստծու հետ սուրբ մտերնության մեջ մնալու և չարից (գրադաշտությունից) հեռանալու համար, ինչպես որ նախատեսված է աստվածային պլանում: «Ե» ճառի 21 տաճար նա պահանջում է «Ձվերինսն խորիել գիրեշտակացն, զի զնոյն փառ եւ զպատի առցուք, եւ լինել սպասաւոր բանին կենաց եւ Արարտին կամաց ճշմարիտ քարոզութեամբ, զանմոլար գիտութիւն սփոռել ի լսելիս մարդկան, զարրուցանել ի գործ բարեաց, եւ ունել գերասանակս անձնիշխան կամաց ի պահպանութիւն պատուիրանին եւ յիրաւուն Տեառն»: Նույն «Ե» ճառի 95 տաճար էլ, հիշեցնելով «ըստ ընդուրութեան աւրինացնի» անհրաժեշտության մասին և այն մասին, որ թեև մարդիկ «...ատեցին զբարին եւ սիրեցին զչարն», բայց արդեն, նոր իրադրության մեջ պետք է այլ կերպ վերաբերվեն ընտրությա-

¹⁵ Յարթմնիության մասին մնարամասն տես՝ *Планетлер О.* Закат Европы, Минск – Москва: «Харвест» 2000, էջ 678-690, 622, 699, 811-816, 837- 839.

նը, դա անեն ըստ Զրիստոսի սահմանած նոր իրավունքի. «...Զի ընտրութիւնք են յԱստուծոյ բարույն եւ չարին ըստ իրաւանցն»: «ԺԱ» ճառի 57 և 126 տներուն խոսվում է «ընտրողական նտքի» նասին, և նորից հիշեցում է արվում, որ դա աստվածային շնորհ է, ուստի դրա հիման վրա պետք է «ատել զչարն, եւ կանչել ի սերն Աստուծոյ եւ ի շինութիւն կանացն՝ կատարեալ ապաշխարութեամբ եւ մտերիմ խոստովանութեամբ»: «ԺԲ» ճառի 13 տանը պահանջվում է «Ատել զչարն, եւ ընդուն զբարին, պատճառ լինել շահից եւ խլիչ վնասուց կորստեան...»: «ԺԵ» ճառի 29 տանն էլ ասվում է. «Այսպիսի ընտրութիւնք են ի մեջ լաւաց եւ անիրաւաց...»:

Նրա կողմից առաջադրվում են նաև չարի մերժման ու իսպառ վերացման և միայն բարին ընտրելու իրական պայմաններ: Այդ պայմաններից գլխավորը, իհարկե, 1. քրիստոնեական նորմերն ու գաղափարներն են կամ «հոգևոր օրենքները», որոնց նասին արդեն իսկ ասվել է և որոնց միջև էլ պետք է կատարվի ծշմարիտ ընտրությունը: 2. Այնուհետև Գր. Լուսավորիչը կարևորում է եկեղեցին, նրա սպասավորներին՝ որպես հավատի տարածման և քրիստոնեական օրենքների գործողությունն ապահովող մարմնի: 3. Մյուս իրական պայմանը դա ծևով զրադաշտական, բայց էռլեյամբ նոր՝ քրիստոնեական պետության առկայությունն է, որն էլ նրա ջանքերով կայացավ 301թ.: Այն նույնպես կոչված է նոր Կտակարանի հոգևոր օրենքների գործողությունը ապահովելու, կիրառելու, դրանց հիման վրա նոր օրենքներ ստեղծելու համար:

«Ժամանակների լրանալուց» հետո (Գ:13), որը նշանավորվելու է արդար դատաստանով, աշխարհում մնալու են միայն մեկ սկիզբ՝ բարին և դրանից սերած օրենքները: Դրանց հիման վրա և դրանց միջև էլ կատարվելու է մարդկանց ազատ ընտրությունը: Դա արդեն ընտրության հինգերորդ տեսակն ու մակարդակն է: Դա նույնպես զրադաշտական պատկերացում է: Այդ ժամանակը, ինչպես արդեն ասվել է, ըստ պետական հավատալիքների գալու է 9000 տարի հետո, որից հետո չարը, նրա օրենքը երկրի վրա իսպառ վերանալու է: Գր. Լուսավորիչը, առանց ուղղակիորեն հիշատակելու, մերժում է նման ժամկետի գոյությունը և գտնում, որ «Ժամանակների լրանալու», արդար դատաստանի միջոցով չարությունը կործանելու և երկրը երկնային թագավորության նախադրան վերածելու օրը որոշվելու է Տիրոջ կողմից, որի գալստյան արագացմանը պետք է աջակցի մարդու ազատ, բարի կամքը: Իսկ մարդու ազատ կամքը համընդհանուր կերպով բուժելու, առողջացնելու, չարի դեմ պայքարելու ունակ և նրան հաղթող դարձնելու համար Զրիստոսն իր գալուստով և նոր Կտակարանով, իր վարքագծի դրսեւումներով արդեն իսկ տվել է գործուն միջոցներ: Դրանից հետո մարդիկ սկսելու են ընտրություն կատարել ոչ թե բարու և չարի, այլ միայն բարուց սերած օրենքների միջև, գործողության որևէ տարբերակ ընտրել միայն դրանց հիման վրա, ինչպես եղել է արարչագործության սկզբում: Բայց այս վերջին ժամանակամիջոցն արդեն ունի համընդհանուր բնույթ, վերաբերում է ամբողջ աշխարհի մարդկությանը և ոչ թե մի քանի մարդու, ինչպես եղել է արարչագործության սկզբում: Բացի այդ, դրա առանձնահատկությունն այն է, որ եթե արարչագործության սկզբում չարի մասին ոչինչ հայտնի չի եղել, ապա այժմ դա հայտնի է և բոլորը՝ իմանալով դրա մասին, միահամուռ և գիտակցաբար մերժելու են այն: Այդ ժամանակն սկսվելու է Հայաստանում, նոր եկեղեցու ու քրիստոնեա-

կան պետության հիմնադրմանը և ավարտվելու է ամբողջ աշխարհի քրիստոնեացմամբ: Դրանով իսկ երկրի վրա ավարտվելու է Երկնային Թագավորության նախադրան, այն է՝ քրիստոնեական պետության կամ պետությունների դաշինքի կամ ֆեդերացիայի, կամ էլ համադաշնության (կոնֆեդերացիայի) կառուցումը: Նման պետության առաջացման հնարավորությունը և անհրաժեշտությունը լիակատար կերպով ամբողջանում է Ազգարանգեղենոսի «Յայոց պատմության» մեջ: Դա մի թագավորություն է լինելու, որտեղ բացառված է չարության, հանցագործության որևէ դրանորում, որի կառուցման ավարտով չարը որպես ընտրության հիմք իսպառ երկրի երեսից վերանալու է: Եվ այդ վերացման պատճառներից մեկը մարդկանց բարի կամքն է, դրա հիման վրա կատարվող ընտրությունը՝ ուղղորդվող հասարակության, եկեղեցու և պետության կողմից:

«Յաճախապատում ճառքում» առկա է նաև ընտրության վեցերորդ տեսակը, ինչպիսին է Երկնային Թագավորության ներսում կատարվող ընտրությունը, որի չորս հարկաբաժններում կամ օրեաններում մարդկանց հոգիները տեղավորվում են «ըստ իրենց արժանավորության» (Բ:30, Ղ:79, Ժ:61, Ժ:10, Ժ:19, 57, 74, Ժ:10, Ի:150 և այլն) և ընտրություն կատարում իրենց օրեանի սահմաններում: Ընտրության մասին «Յաճախապատում ճառքում» կան այլ բազմաթիվ ասույթներ, որոնք վկայում են, որ Յայաստանում իսկապես եղել է ազատ կամքի և ընտրության մասին զարգացած տեսություն, և այն արտացոլված է եղել ոչ միայն Ավեստայում, այլ նաև դարձել է առանձին տրակտատների և քննարկման նյութ:

Մնում է պատասխանել մեզ հետաքրքրող մի հարցի ևս. արդյո՞ք կարող էր ազատ ընտրության մասին նման տեսություն առաջարել Մեսրոպ Մաշտոցը՝ քերթելով «Յաճախապատում ճառքը»: Իրա պատասխանը միանշանակ է՝ ո՞չ: Յայ թագավորները՝ սկսած 224-226թթ., հայկական թագավորությունը իրանական պետությունների կոնֆեդերացիայից (ֆեդերացիայից) դուրս բերելու պահից, ազատ կամքի ու ընտրության տեսության հիման վրա տասնյակ տարիներ շարունակ պայքարել էին իրանում հաստատված Սասանյան դինաստիայի դեմ՝ իրենց ֆիզիկական գոյությունը և երկրի անկախությունը պահպանելու համար: Յայոց իշխանների համար էլ անկախությունը, որի երաշխավորն էր Յառը, շահեկան էր, քանզի նրանք ազատվում էին հարկերի, սուրբերի ու պարհակների մի մասից, Միջին Ասիայում բուրանցիների դեմ պատերազմելու անհրաժեշտությունից և այլն: Բացի դրանից, հայ հասարակության մեծամասնությունը անկեղծորեն ընդունել էր Տիրոց Խոսքը, որի տարածնան դեմ պատմականորեն հնարավոր է չէր պայքարել: Այդպիսի նպաստավոր իրադրության մեջ էլ Գր. Լուսավորիչը՝ զրադաշտական ազատ կամքի և ազատ ընտրության մասին տեսությունը քրիստոնեացնելով, դրա հիման վրա Յայաստանում քարոզեց նոր կրոնական, իրավական, բարոյական հայացքներ և հաղթեց, որի արդյունքն է նոր պետությունը, եկեղեցին, իրավունքը և այլն:

Մեսրոպ Մաշտոցի ժամանակաշրջանում պատմական իրականությունը այլ էր: Նա իրանահպատակ էր: Մեծ Յայաստանը, երկուհարյուրամյա պատերազմներից հյուծված և Յառնի աջակցությունից գրկված, 387թ. ի վեր գտնվում էր իրանի կազմում: Նրա պետական կառուցվածքի մեջ խորագույն փոփոխություններ էին կատարվել, նրանից անջատվել և իրանի կազմի մեջ էին մտցվել դրա

նահանգների մի մասը: Ազատ կամքի քարոզումն այնտեղ նշանակում էր ժողովրդին ապստամբության մղել, որի հաջողության ոչ մի պայման չկար, իսկ անհաջողության՝ որքան ասես: Նրա ղեկավար կաթողիկոս Սահակ Պարթևը խոնարհաբար գնում էր Իրամի արքունիքը և զանազան արտոնություններ պոկում իր ազգականների համար, այնտեղ զբաղվում միջնորդություններով, և բոլորովին հաշտված էր առկա իրողությունների հետ: Նրա կանոններում¹⁶ ազատ կամքի մասին ոչ մի հիշատակում չկա և նա ամեն ինչ թողել էր Աստծո կամքին: Նրա նպատակն էր եղածը պահպանելը, և նա չեր կարող թույլ տալ իայ մարդու ազատ կամքի որևէ դրսնորում, դրա մասին ուսմունքի քարոզչություն: Առավել ևս նման բան չին թույլ տա նրան փոխարինած ասորի կաթողիկոսները և ճիշտ կանեին: Դա վտանգավոր էր երկարատև պատերազմներից ծայրահեղ հյուծված իայ ժողովրդի համար:

Մերուական Մաշտոցը հեղափոխական չէր և այդպիսին չէր կարող լինել: Նա պետության, Եկեղեցու ղեկավար կամ իրավաբան էլ չէր, այլ ընդամենը կուսակրոն: Բացի դրանից, ազատ կամքի և ընտրության տեսությունը՝ զարգացած լինելով Գր. Լուսավորչի կողմից այդ ճառերում՝ բուն ավեստական է, և դրա քննարկումն ու արձարծումը կարող էր Մաշտոցի համար հանգեցնել ոչ ցանկալի հետևանքների: Այդ տեսությունը կարող էր ակտիվացվել միայն արտակարգ իրադրության հետևանքով: Նման իրադրություն ստեղծվեց միայն Մաշտոցի մահվանից 13 տարի հետո, Իրանի թագավոր Շահը Երկրորդի մի քանի իրամանագրերով, հատկապես՝ հավատափոխությանը և հարկերին վերաբերող, երբ Մեծ Յայատանում մարդկային կյանքը պարզապես անհնարին դարձավ: Նման իրադրությունն էլ հանգեցրեց նրան, որ ազատ կամքի ու ընտրության մասին տեսությունը անհրաժշտաբար կրկին ակտուալիզացվեց: Այն արտացոլված է պարսիկ թագավորի իրամանագրին հայերի պատասխան նամակում և Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոց» գրքում¹⁷, և դրա արդյունք էր հայերի 451թ. ապստամբությունը: Պետք է նաև հաշվի առնել այն հանգանամանքը, որ 4-րդ դարում հանդես էր Եկեղեց Մանին: Նա ակտիվորեն հերքում էր ազատ կամքի և ընտրության գոյությունը, որը նա անում էր Նոր Կտակարանի դրույթների հիման վրա¹⁸, իսկ դա նույնպես կարող էր Մաշտոցի աշխարհայացքի վրա ազդեցություն ունենալ:

"ПРОБЛЕМА СВОБОДЫ ВЫБОРА В "ЧАСТОПОВТОРЯЕМЫХ РЕЧАХ" ГРИГОРИЯ ПРОСВЕТИТЕЛЯ. ПРАВОВОЙ АНАЛИЗ"

С. А. ХАЧАТРЯН

В статье "Проблема свободы выбора в "Частоповторяемых речах" Григория Просветителя. Правовой анализ" рассматривается такой важный аспект теории свободы воли, как свободный выбор.

¹⁶ Տե՛ս Կանոնագիրք հայոց, Աշխատասիրության՝ Վազգեն Յակոբյանի, Երևան, ՀՀ ԳԱ հրատ., հ.1, 1964, էջ 363-422:

¹⁷ Տե՛ս **Եղիշե**, Վարդանի և հայոց պատերազմի մասին, Երևան, ԵՊՀ հրատ., 1989; **Եղմիկ Կողբացի**, Եղծ աղանդոց, Երևան, 1994: **Խաչատրյան Ս. Ա.**, Եզնիկ Կողբացին կամքի ազատության մասին, Երևան, 2003:

¹⁸ Տե՛ս **Widengren G.** Mani und der Manichaeismus. Stuttgart, 1964.

Обосновывается, что теория о свободе воли и выбора, развитая Григорием Просветителем, одним из первых применивших философский подход в христианской теологии, не имеет аналогов в христианском богословии, в исторической науке о праве и основана на авестийской-зороастриской теории свободы воли и выбора. Эта теория научно обоснована более последовательно, чем подобные теории его предшественников Климента Александрийского и Оригена. В статье также доказывается, что Месроп Маштоц не мог быть автором "Частоповторяемых речей".

THE ISSUE OF FREE CHOICE IN “SPEECHES”

S. A. KHACHATRYAN

The important side of the theory of free will such as free choice is discussed in the article. It argues that the theory of free will and free choice has not its analogue in the Christian theology, history and law which is developed by Gregory the Illuminator who was one of the first to apply the philosophical approach in Christianity. It is based on the Zoroastrian theory of free will and free choice and is argued more consistently than the corresponding theories of Kliment of Alexandria and Origenes. It is stated in the article that Mesrop Mashtots could not be the author of “Speeches”.

ՀԱՅՈՑ ԴԱՏԱՍՏԱՆԱԳՐՁԵՐԸ ՈՐՊԵՍ ՀԱՅ ՄԻԶԱԱՐՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՂԲՅՈՒՆ

Մ. Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ
ԳՊՀ դրցենսություն

Հայ ժողովուրդը, լինելով աշխարհի հնագույն ժողովուրդներից մեկը, ունի իր պատմական, իրավական զարգացման առանձնահատկությունները: Հայ իրավական հուշարձաններուն առկա են իրավաքաղաքական մտքի արժեքավոր վկայություններ՝ մարդու իրավունքների վերաբերյալ իրավանորմեր, որոնք ժամանակին խնդիր են ունեցել պաշտպանելու մարդու անվտանգությունը, նրա ազատ կանքը, պատիվը և արժանապատվությունը:

Իրավական հուշարձանները կանոնական և աշխարհիկ օրենքների համակարգված ժողովածուներն են: Հայ իրավական հուշարձանները մի շարք պատճառներով համաշխարհային իրավաքաղաքական մտքի և մարդու իրավունքների զարգացման պատմության մեջ չեն ունեցել այնպիսի ազդեցություն, ինչպիսին ունեցել են անգլիական¹, ֆրանսիական² և ամերիկյան³ հուշարձանները:

¹Տես Ազատությունների Մեծ Խարտիան Անգլիայում /1512թ. հունիսի 15/ (**Արշակյան Ա.** Արտասահմանյան Երկրների պետության և իրավունքի պատմություն, Ստրկատիրության և ֆեոդալիզմի շրջան, հատոր 1, Ե., 1997, էջ 150; Հրետանական պատմության մեջ չեն ունեցել այնպիսի ազդեցություն, ինչպիսին ունեցել են անգլիական¹, ֆրանսիական² և ամերիկյան³ հուշարձանները):

²Տես Մարդու և քաղաքացու իրավունքների մասին ֆրանսիական հոչակագիրը /1789թ. օգոստոսի 26/ (**Արշակյան Ա.**, Արտասահմանյան Երկրների պետության և իրավունքի պատ-